ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2020 թվականի հուլիս ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2020 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 30,470 մլն դրամ՝ պլանավորված 30,000 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1,6 տոկոսով կամ 470 մլն դրամով:

Հուլիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4,585.8 մլն դրամ՝ պլանավորված 4,500 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1,9 տոկոսով կամ 85,8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 172 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 8 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 14 ստուգումներ, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 3,0 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Իրականացված հսկողական միջոցառումների շրջանակներում արձանագրվել են ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 3 և վարձու աշխատողների չձևակերպման 2 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 141 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 81-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 22-ը՝ իրականացված գործարքները հավաստող փաստաթղթերի, 8-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 6-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 3-ը՝ ԱՀ կառավարության 2020թ. մայիսի 18-ի N 372-Ա որոշմամբ հաստատված շահառուների ցանկում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանելու հիմքերի և 21 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 4 հայցադիմում՝ 60,0 հազ. դրամ գումարով:

Դատական մարմինների կողմից նույն ժամանակահատվածում վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ հայցերի հիման վրա կայացվել է 3 վճիռ՝ 180,0 հազ. դրամ գումարով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 98 վարչական գործով սահմանվել է 1,695.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հուլիս ամսում հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին է ներկայացվել 1 դիմում-գանգատ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 11,987 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 11,019:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 69 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում հուլիս ամսում կատարվել է վերադարձ 178 վարձու աշխատողի՝ 26,6 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 42 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Մշակվել և ԱՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել հարկային օրենսդրությունում փոփոխություններ նախատեսող 7 օրենքների նախագծեր, որոնք ուղղված են որոշ եկամտատեսակների մասով սահմանված դրույքաչափերի վերանայմանը, համավարակի բացասական ազդեցություն կրող ոլորտներում հարկման առավել բարենպաստ պայմանների ձևավորմանը և օրենքների կիրառության ընթացքում առաջ եկած խնդիրների լուծմանը:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 18-ի N 372-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

ԱՀ ՊԵԿ նախագահի հրամանով հաստատվել է «Պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ներքին կառուցվածքը», փոփոխություններ կատարվել մի շարք հանձնաժողովների ու

աշխատանքային խմբերի կազմում և «Հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագրի օրինակելի ձև»-ում:

Հաշվետու ամսում հանդիպում է կազմակերպվել աշխատանքային այցով Արցախ ժամանած ՀՀ ՊԵԿ նախագահ Էդվարդ Հովհաննիսյանի ղեկավարած պատվիրակության հետ, որի ընթացքում քննարկվել են համավարակի պայմաններում հեռավար եղանակով անձնակազմի մասնագիտական վերապատրաստման, երկու պետությունների հարկային օրենսդրությունների և հարկային մարմինների կողմից իրականացվող վարչարարության ներդաշնակեցման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում փորձի փոխանակման և մի շարք այլ հարցեր: Ներկայացվել է նաև ՀՀ և ԱՀ հարկային մարմինների 2018-2020թթ. համագործակցության ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը, ինչպես նաև պայմանավորվածություն ձեռք բերվել քննարկված հարցերը համակարգված իրականացնելու, այդ թվում՝ 2021-2023թթ. համագործակցության ծրագրի մշակման նպատակով նախապատրաստական աշխատանքներ սկսելու շուրջ:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում՝ երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հաշվետու ամսում ՊԵԿ նախագահի տեղակալը և արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության վարչության պետը մասնակցել են ԱՀ պարետատան կողմից կազմակերպված առցանց ասուլիսին, որի ընթացքում ներկայացվել են արտակարգ իրավիճակի պայմաններում պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող միջոցառումները:

Հուլիս ամսում մեկնարկել է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսավարող սուբյեկտներին աջակցության տրամադրման երկրորդ փուլը, որի շրջանակում հարկ վճարողներից ընդունվել են միանվագ դրամական

աջակցություն և դրամաշնորհ ստանալու վերաբերյալ 206 դիմումներ, որոնցից ընթացքավորվել են 110 դիմումներ, իսկ 96-ը գտնվում են ուսումնասիրության ընթացքում:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել երկու հայտարարություն:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել է առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկը:

Հաշվետու ամսում շարունակվել է կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի մասնակից քաղաքացիների վճարած սոցիալական վճարների գումարների վերահաշվարկի գործընթացը, որի շրջանակներում 77 քաղաքացու վերադարձվել է սոցիալական վճարի ավել վճարված մասը:

Հուլիս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 641, ելքագրվել՝ 240 նամակ-գրություն, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 5 գրություն, որից 1-ը՝ էլեկտրոնային եղանակով: